«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ԲԱՆԱԽՈՍ

2000 04 05 Թիվ 35

2000 03 22

ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր



Արդյոք Հայաստանում կայացել է չորրորդ իշխանությունը: Այս հարցը շատ են սիրում խմբագիրներին տալ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողուհիները, որպեսզի մի տեղ պատասխանը զետեղելով, ստուգարք ստանան լրագրության պրակտիկայից: Եթե անկեղծ լինեմ, այդ հարցին պետք է պատասխանեմ բացասաբար: Եվ իմ բացասական պատասխանը ոչ մեկի համար սենսացիա չի լինելու: Ի վերջո, «չորրորդ իշխանություն» արտահայտությունը այլաբանություն է, մետաֆորիա, որը կոչված է ընդգծել լրատվամիջոցների կարեւորությունը, նրանց ազդեցությունը հասարակական կարծիքի վրա: Բայց նույնիսկ որպես այլաբանություն, չորրորդ իշխանության մասին կարելի է խոսել հստակ պետական համակարգի եւ զարգացած ժողովրդավարական ինստիտուտների պարագայում: Տասը տարվա ընթացքում, նույնիսկ գերմարդկային ճիգերի միջոցով, դա հնարավոր չէ անել: Մանավանդ Հայաստանում, որը խորհրդային փոքրիկ բեկորներից մեկն է եւ ի տարբերություն, ասենք, Էստոնիայի, գրեթե չուներ անկախ պետության եւ քաղաքացիական հասարակության ավանդույթներ:

> «...Այսքանով հանդերձ, չի կարելի ասել, որ 2-5 հազար տպաքանակ ունեցող թերթերը որեւէ ազդեցություն չունեն հասարակական կարծիքի վրա».

Մինչեւ 1990 թվականը ընդհանրապես անիմաստ է խոսել ոչ միայն չորրորդ, այլեւ առաջին երեք իշխանությունների մասին: Կար մեկ՝ գործադիր իշխանություն, որն իրականացնում էր կոմունիստական կուսակցությունը: Զարմանալի չէ, որ Երրորդ, 1990-91թթ. ստեղծված հանրապետությունում նույնպես ամենազարգացածը գործադիր իշխանությունն է, որը դարաբաղյան հաղթական պատերազմից հետո ունի նաեւ վառ արտահայտված ռազմականացած բնույթ: Օրենսդիր իշխանությունը՝ խորհրդարանը, 1995 եւ 1999 թվականներին ձեւավորվել է ոչ թե ընտրողների կամքով, այլ կառավարության վարչական եւ նյութական լծակներով: Դատական իշխանությունը, անկախ անցկացվող բոլոր բարեփոխումներից, շարունակում է դատախազության հետ միասին մնալ ամենակոռումպացվածը եւ, հետեւաբար, շատ խոցելի է նույն գործադիր իշխանության մանիպուլյացիաների համար: Օրենսդիր եւ դատական իշխանությունները, հետեւաբար, շարունակում են մնալ գործադիր իշխանության կցորդը: Այս պայմաններում ինչպիսի՞ չորրորդ իշխանության մասին կարելի է խոսել: Միեւնույն ժամանակ ոչ ոք չի պատրաստվում նստել եւ սպասել, մինչեւ իշխանության տարբեր թեւերը իրարից տարանջատվեն, եւ գործադիր իշխանությունը զրկվի դոմինանտ դերից:

Ավելին, ազատ մամուլը իր էությամբ կոչված է նպաստել նշված գործընթացների արագացմանը:

Այստեղ պարզապես արձանագրենք, որ լրատվամիջոցների կայացումը այս կամ այն չափով կախված է գործադիր իշխանության բարի կամքից՝ ցանկության դեպքում նա կարող է բռնությամբ, դատական հետապնդմամբ կամ տնտեսական ճնշմամբ շատ ծանր վիճակի մեջ դնել իրեն անհաճո լրատվամիջոցին: Պետք է ասել, որ այս տասը տարվա ընթացքում իշխանությունը այդ բարի կամքը ընդհանուր առմամբ դրսեւորել է: 1998 թվականի փետրվարին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո շատ բաներ շտկվեցին: Շտկվեցին այն սխալները, որոնք թույլ էին տրվել անցյալում, մասնավորապես, թույլատրվեց Հայ հեղափոխական դաշնակցության եւ նրա մամուլի գործունեությունը, շատացել են անկախ հեռուստաընկերությունները, բարձրացել է նրանց որակն ու ազատության աստիճանը, ավելի հազվադեպ են համակարգված բռնությունները խմբագրությունների դեմ: Որպես թերթի խմբագիր եւ «A1+» անկախ հեռուստաընկերության մեկնաբան, ես այս առումով չունեմ դժգոհության առիթներ: Բնական է, որ այս բարի կամքը մեծ չափով պայմանավորված է նաեւ արտասահմանյան վարկեր ստանալու իշխանության ցանկությամբ: Արեւմուտքը շատ մեծ ուշադրությամբ հետեւում է նորանկախ երկրների մամուլի ազատության հարցերին եւ մեծ չափով դրանց լուծմամբ է պայմանավորում իր վերաբերմունքը տվյալ պետության նկատմամբ:

Սակայն միայն սրտից բխած կամ Արեւմուտքի ճնշմամբ պայմանավորված իշխանությունների բարի կամքով, առանց համակարգային փոփոխությունների, չի կարող կայանալ չորրորդ իշխանությունը: Այստեղ կարող են դեր խաղալ չորս տիպի գործոններ. արտաքին ազդեցությունը, մամուլի արժանահավատությունը, անաչառությունը եւ գաղափարախոսությունը, որոնք կփորձեմ հետեւողականորեն դիտարկել:

Արտաքին պայմաններ

Չորրորդ իշխանությունը կարելի է համարել կայացած այնքանով, որքանով այն հաջող, բարգավաճող բիզնես է: Ոչ միայն թերթի խմբագիրը, այլեւ ցանկացած մանր բիզնեսմեն գտնվում է այս առումով ծանր վիճակի մեջ: Իհարկե, չվերցնելով «TV ալիք» կամ «Եթեր» թերթերը, որոնք կարելի է հաջող բիզնես համարել, բայց չորրորդ իշխանություն չեն, քանի որ հասարակական գործոն չեն: Մնացած հասարակական-քաղաքական թերթերը մեզանում չեն կարող հաջող բիզնես լինել առնվազն երեք պատճառով: Առաջինն այն է, որ ժամանակակից հայաստանցի ընթերցողը ի վիճակի չէ իր միջոցներով պահել այդ թերթերը, որոնք այժմ արժեն հատը 100 դրամ, այսինքն այնքան, որքան կես կիլոգրամ հացը: Համեմատության համար ասեմ, որ կոմունիստական շրջանում հացը արժեր 30 կոպեկ, իսկ թերթը՝ 2: Բնականաբար, նվազագույն աշխատավարձը՝ 5000 դրամը կարելի է ամբողջությամբ ծախսել ընդամենը ամիսը երկու անուն թերթ գնելով, սակայն այդպես ոչ ոք չի վարվում: Իհարկե, դրանով է պայմանավորված թերթերի ցածր տպաքանակները, եւ, հետեւաբար, մեր գործունեության տնտեսական անարդյունավետությունը: Ցածր տպաքանակների մյուս պատճառը փոստային բիզնեսի քայքայված վիճակն է, երբ բացակայում է թերթը ընթերցողի բնակարան հասցնելու ծառայությունը: Ինձ՝ որպես թերթի խմբագրի, օրական 2-3 հոգի է զանգահարում, որոնք պատրաստ են վճարել այդ 2,5 հազար դրամը, նաեւ՝ հավելյալ 500 դրամը՝ որպեսզի դուրս չգան տնից եւ տանը, ինչպես քայքայումից առաջ էր, կարողանան ստանալ թերթերը: Մեր փոստային ծառայությունների վատ բիզնեսը, այսինքն այդ հնարավորությունը չօգտագործելը (նրանք հաստատ կարող են փոքր գումարներ ներդնելով այդ բիզնեսը զարգացնել) հանգեցնում է, որ մեր ընթերցողների թիվը պակասում է:

Թերթերի անշահութաբերության եւ հակառակը՝ տնտեսական վնասաբերության երրորդ պատճառն այն է, որ մեր տնտեսության շուկան եւ ազատ մրցակցությունը այն չափով զարգացած չեն, որ անհրաժեշտություն զգան մեծ քանակով եւ բարձր գներով թերթերում գովազդ տպագրելու: Այստեղ պարբերաբար, ինչպես գիտեք, գալիս են ադրբեջանցի լրագրողները եւ հայտնի է, որ այնտեղ գո-

Արամ Աբրահամյանը *ծնվել է 1960 թվականի փետրվարի 17-ին, Երեւանում:*

1983 թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը:

1988-ին «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ պաշտպանել է արվեստագիտության թեկնածուի թեզը:

1983-1991 թվերին աշխատել է Գիտությունների ակադեմիայում սկզբից որպես գիտաշխատող, այնուհետեւ որպես գիտքարտուղար:

1991-1992 թվերին «A1» անկախ ստուդիայի գլխավոր խմբագիրն էր:

1992-1994 թթ. աշխատել է նախագահի աշխատակազմում, սկզբից ՀՀ նախագահի մամուլի քարտուղարի տեղակալ, այնուհետեւ՝ որպես մամուլի քարտուղար:

1994 թվականից «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիրն է:

Ամուսնացած է, ունի 3 երեխա:

վազդի գինը 10 անգամ ավելի թանկ է, քան Հայաստանում: Դա ինչ-որ չափով կարող է խոսել նաեւ այդ երկրի տնտեսական զարգացվածության մասին:

Վերջապես, չորրորդ պատճառը մեր երկրի հարկային օրենսդրությունն է, ըստ որի իմ լրագրողին 100 դոլար աշխատավարձ տալու համար ես ստիպված եմ տարվա առաջին ամիսը ծախսել 138 դոլար, իսկ տարվա վերջում, երբ 38% գանձվում է 1200 դոլարից, տվյալ աշխատողի աշխատավարձից ոչինչ չի մնում: Այս վիճակում են, բնականաբար, ոչ միայն թերթերի խմբագիրները, այլ ցանկացած փոքր բիզնեսով զբաղվող մարդ: Աշխատողին 100 դոլար օրինական ճանապարհով վճարելը թե թերթերի, թե փոքր խանութների, կրպակների, թե ցանկացած մանր բիզնեսով զբաղված մարդկանց բյուջեի համար քայքայիչ է:

Վերը թվարկած երեք արտաքին գործոնների ազդեցության տակ բոլոր թերթերը ստիպված են փնտրել հովանավորներ, որոնք կոչված են ծածկելու նրանց տնտեսական գործունեության անշահութաբերությունը: Եվ քանի որ ոչ ոք հենց այնպես փող չի տալիս, ապա նման հովանավորների առկայությունը այս կամ այն չափով կաշկանդում է խմբագրությունների գործունեությունը: Ճիշտ է, կոնկրետ « Առավոտը» փորձում է գտնել այնպիսի գործարարների, որոնք չունեն վառ արտահայտված քաղաքական շահեր եւ պարզապես շահագրգռված են, որ Հայաստանը զարգանա ազատական, ժողովրդավարական արմատական բարեփոխումների ճանապարհով: Կան մարդիկ, որոնց հայացքը համընկնում է մեր հայացքների հետ եւ այդ պատճառով մեզ հարմարվելու մեծ ցիգեր պետք չեն: Բայց կան ոլորտներ, որտեղ ստիպված ես ավելի նրբանկատ, ավելի զգուշավոր լինել, եւ դա, ինչ խոսք, ազատության սահմանափակում է: Այն թերթի խմբագիրը, որը ասում է (կրկնեմ, խոսքը ոչ թե «Եթերի» կամ «TV ալիքի» մասին է), թե աշխատում է ինքնաֆինանսավորմամբ, պարզապես ստում է: Իսկ մի իշխանություն, նույնիսկ չորրորդ, որը սահմանափակվում է դրսից ներհոսող գումարներով, լիակատար լինել չի կարող: Եթե վերցնենք մակրո մակարդակը, ապա Հայաստանի իշխանությունը, ենթադրենք գործադիր, նրա գործունեությունը, բյուջեի ազատականությունը նույնպես սահմանափակվում են նրանով, որ բյուջեի կեսը կազմված է, ասենք, Համաշխարհային բանկի կամ ՄԱՀ-ի գումարներից:

Մինչեւ չունենանք իսկապես ազատ եւ զարգացած տնտեսություն, ելքն, անշուշտ, այս փուլում ԶԼՄ-ներին որոշակի տնտեսական արտոնություններ տալն է: Նման ուղղվածության օրենք, որի իմաստը լրատվամիջոցներին եւ նրանց հարակից ոլորտներին, այսինքն՝ թղթի, «Հայմամուլի», տպարանի ավելորդ հարկերից ազատելն է, մենք փորձում ենք մշակել եւ ներկայացնել Ազգային ժողովին:

Այսքանով հանդերձ, չի կարելի ասել, որ 2-5 հազար տպաքանակ ունեցող թերթերը որեւէ ազդեցություն չունեն հասարակական կարծիքի վրա: Այնուամենայնիվ, հասարակության ակտիվ, պասիոնար մասը թերթեր գնում է եւ թերթերի գրածներով հետաքրքրվում: Խոսքը, մասնավորապես, քաղաքական եւ տնտեսական վերնախավի, խոշոր բյուրոկրատիայի, գործատուների մասին է: Նրանց միջոցով, այսինքն՝ միջնորդավորված ձեւով, տպագիր լրատվամիջոցներն, այնուամենայնիվ, ազդում են թե ավելի լայն զանգվածների եւ թե, ինչ-որ չափով, ներքաղաքական վիճակի վրա:

Բայց պետք է նաեւ ընդունել, որ մենք՝ լրագրողներս, առայժմ չենք օգտագործում մեր բոլոր ներքին ռեսուրսները չորրորդ իշխանություն դառնալու համար: Հենց դրանց մասին եմ մտադիր խոսել:

Արժանահավատություն

Եթե ուզում ես, որ քեզ վստահեն, եթե ուզում ես, որ մարդու վրա ազդեցություն թողնես, ապա պարտավոր ես արժանահավատ լինել: Մամուլի եւ նաեւ մեր թերթի կարեւոր թերություններից է արժանահավատության պակասը: Այստեղ կան թե օբյեկտիվ, եւ թե սուբյեկտիվ պատճառներ: Սկսեմ առաջիններից: Մենք առայժմ չենք սովորել փաստերի հետ աշխատել այնպես, ինչպես դա անում են մեր արեւմտյան գործընկերները: Լսելով որեւէ փաստի մասին, լրագրողը, եթե դա իր կարծիքով հետաքրքրություն է ներկայացնում կամ համապատասխանում է իր ներքին սուբյեկտիվ համոզվածությանը, անմիջապես զետեղում է այն թերթում: Օրինակ, եթե ես ներքուստ վստահ եմ, որ բոլոր ոստիկանները կաշառակեր են, ապա իմ մեջ ներքին դիմադրություն չի առաջացնի այն լուրը, թե ոստիկանության այս կամ այն աշխատողը կաշառք է վերցրել: Լրագրողն իրեն նեղություն չի տա պաշտոնական եւ անպաշտոն, ուղղակի եւ անուղղակի աղբյուրներից ճշտելու լուրը: Դրա համար անհրաժեշտ են մեծ ջանքեր եւ որոշակի ժամանակ: Իսկ նա պետք է վազի հաջորդ ասուլիսին կամ հաջորդ հարցազրույցին: Օրինակ, եթե այսօր Հայաստանում տեղի ունենային շատ կարեւոր 100 իրադարձություններ, ապա այն գործընկերները, որոնք պատիվ են արել այսօր գալ այստեղ լսելու իմ դասախոսությունը, չէին գա:

> «Բոլոր թերթերը ստիպված են փնտրել հովանավորներ, որոնք կոչված են ծածկելու նրանց տնտեսական գործունեության անշահութաբերությունը»:

Ի դեպ, ասուլիսն ու հարցազրույցը շարունակում են մնալ լրատվամիջոցների գերիշխող ժանրը, ինչն ինքնին չի բարձրացնում մամուլի ազդեցությունը: Վերաշարադրելը ասուլիսում ասվածը կամ հարցազրույցում արտասանածը վերծանելը դարձել է մեր հիմնական աշխատանքը: Եվ քանի որ հեռուստաընկերությունները օպերատիվ են աշխատում, ընթերցողը որեւէ ցանկություն չունի այդ նույն խոսքերը, նույն ձեւակերպումները հաջորդ առավոտ կարդալ թերթերում: Տպագիր լրատվամիջոցներից ընթերցողն ուրիշ բաներ է սպասում: Նրանք ցանկանում են, որ մենք փոքր ինչ ավելի խորանանք նույն ասուլիսին հնչած խնդիրների մեջ, եւ դրանք ավելի բազմակողմանի ձեւով ներկայացնենք հասարակությանը: Ընթերցողները չեն ցանկանում, որ մենք բոլոր լուրերը քաղենք Ազգային ժողովից, ծայրահեղ դեպքում՝ կառավարությունից եւ նախագահական նստավայրից, պատկերացում չունենալով, թե էլ որտեղ կան մարդկանց հուզող խնդիրներ: Իհարկե, նման մակերեսայնության եւ փակ, քաղաքականացված լրագրողական շրջանակի սահմանափակության խնդիրները լուծել կարելի է միջոցների, ժամանակի եւ մարդկանց քանակը ավելացնելով: Եթե ես պետք է հանձնարարեմ ենթադրենք էլեկտրական բաշխիչ ցանցերի խնդրով, մեկ շաբաթ զբաղվել որեւէ լրագրողի, ապա չեմ կարող այդ շռայլությունը ինձ թույլ տալ, որովհետեւ այդ լրագրողը պետք է օրական 1-1.5 էջ գրի օրվա իրադարձությունների մասին: Ինքն էլ գրում է նույն հարցազրույցների, ասուլիսների, Ազգային ժողովից ստացած լուրերի հիման վրա: Բայց նույնիսկ միջոցների պակասության պայմաններում, ես լրագրողների եւ առաջին հերթին խմբագիրների վրայից մեղքը չեմ հանում, որովհետեւ հենց մեզ մոտ է պակասում պրոֆեսիոնալիզմը եւ երեւակայությունը:

Անդրադառնալով արժանապատվության պակասի օբյեկտիվ պատճառներին պետք է նշել, որ պետական գերատեսչությունները որպես կանոն խիստ անբարյացակամ են լրատվամիջոցների նկատմամբ: Ընդ որում,

որքան ցածր է տվյալ պաշտոնյայի կարգավիճակը, այնքան մեծ է նրա հավակնությունները մամուլն արհամարհելու եւ դրանով ինքնահաստատվելու: Լրագրողների համար չափազանց դժվար է որեւէ տեղեկատվություն ստանալ այդ գերատեսչությունից, այնտեղ սովորաբար աշխատում են ոչ պրոֆեսիոնալ եւ լրատվություն տալու ցանկություն չունեցող մարդիկ: Մարդիկ, որոնք տվյալ նախարարի կամ փոխնախարարի ծանոթներն են, որոնք իրենց պարտքն են համարում ոչ թե մատուցել այլ թաքցնել լրատվությունը: Պետական բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց լրատվակենտրոններով համոզված են, որ զբաղվում են խիստ կարեւոր պետականաստեղծ աշխատանքով, իսկ մենք ոտքի տակ ընկնելով խանգարում ենք նրանց աշխատանքը եւ ինչ-որ անիմաստ հարցադրումներ առաջադրում: Մի օրինակ բերեմ: Կառավարության լրատվության պաշտոնյային մեր լրագրողը հարցնում է չափազանց անմեղ եւ, իմ կարծիքով, բնականոն հարց. «Այսօր վարչապետը հանդիպե՞լ է Միասնություն դաշինքի հետ»: Պատասխանը. «Այդպիսի հարց կտա՞ն, բա դու չե՞ս ամաչում այդպիսի հարցից: Քո ի՞նչ գործն է, հանդիպել է, չի հանդիպել, ուզել է՝ հանդիպել է, չի ուզել՝ չի հանդիպել»: Կարծես թե նրա ինտիմ կյանքի մասին հարցեր ենք տալիս: Սա չափազանց տարածված պրակտիկա է լրատվական կենտրոններում: Այս պայմաններում չափազանց դժվար է լրջորեն օգտվել պաշտոնական աղբյուրներից, որն անշուշտ, ազդում է տեղեկատվության արժանապատվության վրա:

> «Թերթը հայտարարությունների տախտակ չէ, որպեսզի այնտեղ տեղադրվեն ցանկացած տեսակետներ»:

Անդրադարձ

Մի կողմից, այո, մենք պետք է փորձենք օբյեկտիվ լինել, այսինքն, կարողանանք առանց նախապաշարումների լսել եւ թերթերում զետեղել տվյալ խնդրի շուրջ տեղի ունեցող բոլոր փաստարկները: Դա ունի նաեւ պրագմատիկ նշանակություն: Տեսականորեն կարելի է ենթադրել, որ թերթը շահում է, եւ ընթերցողների քանակը շատանում է, երբ նրանց վզին չի փաթաթվում որեւէ տեսակետ եւ նրանք տեսնում են, որ տվյալ լրատվամիջոցը զուրկ է ագրեսիվ քարոզչական շեշտադրումներից: Ավելին, ես հնարավորություններիս չափով փորձում եմ զերծ պահել ինձ, իմ աշխատակիցներին եւ, որն ավելի դժվար է, իմ հեղինակներին հուզական որակումներից, քնարական զեղումներից, չափից դուրս վառ արտահայտած անձնական վերաբերմունքից: Դա, անշուշտ, բարձրացնում է թերթի վարկը, լայնացնում ընթերցողների շրջանակը: Բացի այդ, նման մոտեցումը համապատասխանում է ընդհանրապես ազատամտության, բաց հասարակարգի սկզբունքներին, որոնք մենք փորձում ենք դավանել: Բայց կա հարցի մյուս կողմը: Մեր առայժմ չկայացած հասարակությունում ցանկացած մտավորական, այդ թվում նաեւ լրագրող, պարտավոր է ունենալ եթե ոչ քաղաքական հայացքների համակարգ, ապա ինչ-որ արժեքներ, որոնք նա հասցնում է հասարակությանը: Դրանք կարող են լինել զուտ մարդկային, բարոյական համոզմունքներ, որոնք կախված չեն քաղաքական նախասիրություններից: Օրինակ, մենք գտնում ենք, որ թերթը պետք է պահպանի ընկածին չխփելու սկզբունքը, չհարվածի նեղության մեջ գտնվողին: Որովհետեւ առանց այդ էլ ստրեսային վիճակում գտնվող, 1992-94 թթ. սարսափելի տարիները տեսած ժողովրդին ավելի նյարդայնացնելը, չարությունը, վրեժխնդրությունը էլ ավելի բարձրացնելը ոչ մի օգուտ չի բերի ոչ քարոզողին, ոչ իշխանությանը, ոչ ընդդիմությանը, եւ ոչ էլ որեւիցե մեկին: Ուստի, մենք խուսափում ենք այն նյութերից, որոնք միտված են էլ ավելի ոչնչացնելու, նվաստացնելու, ասենք, Վանո Սիրադեղյանին, Աշոտ Բլեյանին, Ալեքսան Հարությունյանին: Եվ ընդհակառակը, ես քաջալերում եմ, երբ նեղ վիճակում գտնվող մարդկանց մասին համարձակվում են ասել որեւէ բարի խոսք:

Ինչպես տեսնում եք, հիշատակված գործիչները պատկանում են տարբեր քաղաքական հոսանքների, բայց նրանց հակառակորդները, բնականաբար, պետք է դժգոհ լինեն մեր այս մոտեցումից: Բայց տվյալ դեպքում մենք ավելի կարեւոր ենք համարում հասարակությանը որոշակի բարոյական սկզբունքների մատուցումը, նույնիսկ այդ հասարակության մի մասի արյունատենչությանը հակադրվելու գնով:

Կցանկանայի խոսել մի խնդրի մասին, որն, ըստ իս, խոչընդոտում է չորրորդ իշխանության կայացմանը: Բանն այն է, որ ոչ միայն ազգային հեռուստաընկերությունը, որի մասին շատ է խոսվում, այլ անկախ եւ կուսակցական լրատվամիջոցների զգալի մասը այսպես թե այնպես գտնվում է նախագահ Ռոբերտ Քոչարյանի վերահսկողության ներքո, փաստորեն, մաս կազմելով պետական քարոզչական մեքենայի: Եվ քանի որ վերջին երկու տարվա ընթացքում թե դարաբաղյան հարցի լուծման, եւ թե սոցիալ-տնտեսական բնագավառում որեւէ առաջընթաց չի գրանցվել, այդ քարոզչական մեքենայի գլխավոր ռազմավարությունն է բոլոր դժվարություններն ու ձախողումները բացատրել ավելի քան երկու տարի առաջ իշխանությունից հեռացած մարդկանց քաղաքականությամբ: Այս մոտեցումը, ինչ խոսք, զուրկ չէ տրամաբանությունից, այսօրվա համակարգի սաղմերը կային նաեւ անցյալում, բայց ռետրոսպեկտիվ քննադատության վրա կենտրոնանալը բազմաթիվ լրատվամիջոցների, ցավոք, զրկում է այսօրվա հրատապ խնդիրների բանական, քննական քննարկման հնարավորությունից: Վաղը այն թերթերում, որոնք պաշտպանում են նախագահ Ռոբերտ Քոչարյանի տեսակետը, դուք կկարդաք, որ Արկադի Ղուկասյանի վրա կրակել է ՀՀՇ-ն:

Խորհրդային Միության հակահիտլերական հերթական հիստերիայի ժամանակ տարածված էր այսպիսի մի ասույթ. «Եթե ծորակում ջուր չկա, ուրեմն հրեաներն են խմել»: Այսօրվա նախագահամետ քարոզչական մեքենայի նմանատիպ հիստերիան, որը ծավալված է նախորդ իշխանության դեմ, տուրք է տալիս հասարակության լյունպենացված զանգվածի վրեժխնդրությանն ու ատելությանը: Ուստի որոշ չափով դա նաեւ պոպուլիստական է: Հայաստանում հիմնականում կա երկու կայացած թերթ, որոնք հակադրվում են այդ ընդհանուր հոսանքին՝ «Առավոտը» եւ «Հայկական ժամանակը»: Բնականաբար, հակադրվելու պայմաններում լիակատար անչառությունը դժվար է պահպանել: Իսկ հակադրվելու պատճառները սկզբունքային են եւ կապված են գաղափարախոսության հետ:

Մարգրետ Թեթչերը մի առիթով ասել է. «Ես չգիտեմ մի որեւէ շահ, բացի մարդու եւ նրա ընտանիքի շահերից»: Բավականին դաժան է ասված, բայց եթե փորձենք խորանալ այդ ասվածի մեջ, ապա խոսքը մեզանում շատ տարածված երեւույթի մասին է: Երբ խոսքը վերաբերվում է հասարակության, ազգի շահերին, ապա միշտ կարող է հայտնվել որեւէ մեկը, որը դա բոլորից լավ գիտի: Եվ երբ նա բոլորից լավ գիտի, որովհետեւ մնացածը տգետ են, զարգացած չեն, չգիտեն հասարակության եւ ազգի շահերը, նա կարող է բռնությամբ իրականացնել այն քաղաքականությունը, որը ճիշտ է համարում:

Մեր հասարակությունում ժամանակ առ ժամանակ բանավեճեր են բռնկվում ազգային գաղափարախոսության մասին: Ենթադրվում է, որ կա մարդկանց մի

խումբ, որը գիտի, թե դա ինչ է եւ, նույնիսկ, ձեւակերպել է, իսկ ազգի մնացած մասը այնքան խակ, տգետ է, որ այդ ճշմարտություններին առայժմ չի հասել: Եթե ես գիտեմ, թե որն է ազգի շահը, իսկ մնացածները չգիտեն, ապա կարող եմ անել հաջորդ քայլը եւ ստիպել, որ իմ տգետ ազգակիցները, որոնք, իմ կարծիքով, իրենց շահը չեն հասկանում, անեն ինչ ուզում եմ:

Այդպիսի գաղափարախոսությանը մենք դեմ ենք: Մենք վստահ ենք, որ ժողովրդավարության հասարակարգում պետք է լինի ինչպես ապրանքների եւ ձեռնարկությունների, այնպես էլ գաղափարների ազատ մրցակցություն: Իսկ չորրորդ իշխանության ֆունկցիան այդ մրցակցությունն ապահովելն է: Բայց որքան էլ լայնախոհ լինի թերթի խմբագիրը, որքան էլ փորձի իր թերթի էջերում տեղադրել բոլոր գաղափարները, տեխնիկապես հնարավոր չէ եւ դրա անհրաժեշտությունը չկա: Ի վերջո, թերթը հայտարարությունների տախտակ չէ, որպեսզի այնտեղ տեղադրվեն ցանկացած տեսակետներ: Թերթը բոլոր դեպքերում ունի ուղղվածություն, որը եւ տարբերում է թերթերի մի խումբը մյուս խմբից: Ինչո՞վ են տարբերվում թերթերը մեզանում. երկու հիմնական սկզբունքով: Առաջին սկզբունքը վերաբերմունքն է պետության հանդեպ: Խորհրդային տարիները մեզանում մշակել են պետության հանդեպ որպես խիստ, բայց արդար հոր նկատմամբ վերաբերմունք: Նա մեզ թույլ է տալիս ինչ-որ բաներ ունենալ, երբեմն թխվածք է տալիս, մեզ կուրծք է տալիս, ստիպում է, որ մենք չարություն չանենք: Այդպիսի պահանջներ պետության հանդեպ մեզանից շատերը պահպանել են առ այսօր: Ինֆանտիլիզմ՝ փոքր երեխայի վերաբերմունք պետության հանդեպ. ե՞րբ եմ ես լավ ապրելու, տուր, որ ես լավ ապրեմ: Այս վերաբերմունքը պետության հանդեպ մեզանում գերիշխող է եւ պահպանում են մեր թերթերից շատերը: Զարգացած հասարակության վերաբերմունքը այլ է. ես հասուն մարդ եմ, ոչ մեկից կոնֆետ չեմ խնդրում, իսկ պետությունն իմ թիկնապահն է: Հասուն մարդը պետության նկատմամբ բոլորովին այլ վերաբերմունք ունի, նա պատասխանատու է իր, իր ընտանիքի բարեկեցության համար: Օրինակ, կոնկրետ ես, տասը տարվա ընթացքում հասել եմ ինչ-որ հաջողությունների: Երբ ես հասնում եմ հաջողությունների, բնականաբար ասում եմ, որ դա իմ տաղանդի, աշխատասիրության շնորհիվ է: Բայց եթե ես չհասնեի այդ հաջողություններին, չէի ասի, որ անտաղանդ, անաշխատասեր կամ ծույլ եմ: Ես կասեմ՝ հանցավոր ռեժիմն է մեղավոր, այդ պատճառով եմ տառապում: Ահա այս տարբերությունը կա պետության նկատմամբ: Հասարակական ինֆանտիլիզմը բնականաբար շահագործվում է քաղաքական գործիչների կողմից: Այդ ինֆանտիլիզմից ազատվելու ձգտումը համարում եմ մեր թերթի եւ նրա ուղղվածության թերթերի առաքելությունը:

Երկրորդ տարբերությունը, որով բաժանվում են թերթերը, ազգի նկարագրի եւ հեռանկարների տարբերությունն է: Ասենք, ամերիկյան ֆիլմերում, հարյուր անգամ մեքենայի տակ ընկած, հազար անգամ վառված եւ վայր ընկած գլխավոր հերոսին մոտեցած ընկերուհին հարցնում է. «Are you OK?», այսինքն՝ լա՞վ ես: Ինչ կաներ հայ հերոսուհին: Նա կասեր. «Վայ, քոռանամ ես, վայ, ի՞նչ պիտի անեմ» եւ այլն, եւ այլն: Այստեղ կենսունակ եւ ոչ կենսունակ ազգերի տարբերությունն է: Լալկանությունը, որը բոլորովին մեր ազգի առանձնահատկությունը չէ, այլ ներարկվել է 1960-70-ական թվականների խորհրդահայ մտավորականության կողմից, մենք փորձում ենք հանել: Մենք բոլորովին տառապյալ չենք, մենք, ի վերջո, հաղթած ենք: Այդ դրական վերաբերմունքը կյանքի նկատմամբ նույնպես փորձում ենք մտցնել հասարակական գիտակցության մեջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Ի՞նչ դեր ունի հայկական մամուլը Հայաստան-սփյուռք կապերում:

- Այդ ուղղությամբ, մենք ցավոք սրտի, քիչ ենք աշխատում: Եթե դրանում միայն մամուլին մեղադրենք, երեւի ճիշտ չի լինի, որովհետեւ ես առ այսօր չեմ պատկերացնում, թե ինչ ռազմավարություն է որդեգրել մեր պետությունն այս կարեւորագույն հարցում: Մարդիկ հավաքվում են Սարդարապատում, խմում են, կենացներ ասում, թե մենք մի ազգ ենք եւ այլն, հետո բաժանվում են՝ առանց գործնական մոտեցումների: Եթե լինեն գործնական մոտեցումներ, մենք մեծ հաճույքով դա կլուսաբանենք, կպրոպագանդենք: Կարծում եմ, ընդհանուր այդ դեկլարացիաներից պետք է գնալ ինչ-որ կոնկրետ ուղղություններով: Կա՞ն սփյուռքահայ իրավաբաններ, որոնք կարող են ստեղծել ազատական, լիբերալ քաղաքական դաշտ, օգնել, որ մեր Ազգային ժողովը դա ստեղծի՝ այո: Կա՞ն հասարակության հետ շփումների մասնագետներ, որոնք կարող են օգնել, որ մենք քարոզչություն տանենք մեր ազգային խնդիրներով՝ կան: Այսինքն, ավելի կոնկրետ, ավելի փոքր խմբերով թող աշխատեն, եւ մենք այդ աշխատանքը հաճույքով կլուսաբանենք:

-Ի՞նչ կարծիքի եք դասական ուղղագրությունը որպես մեկ միասնական համակարգ ընդունելու մասին:

- Առաջ այնպիսի պատրանք կար, որ Հայաստանն ու սփյուռքը պետք է վերջնականապես միաձուլվեն եւ իրարից ոչ մի բանով չտարբերվեն: Եթե նրանց հարմար է դասական ուղղագրությունը, թող օգտագործեն, յուրաքանչյուր գրագետ մարդ Հայաստանում այն կկարդա: Եթե մեզ հարմար է խորհրդային ուղղագրությունը, եկեք օգտագործենք, եւ սփյուռքում ցանկացած գրագետ մարդ մեզ կկարդա: Պետք չէ այդ պրոբլեմով ծանրաբեռնել մեր առանց այդ էլ դժվար կյանքը:

-Եթե դուք լինեիք կաշառակերության դեմ պայքարի նախարար, ո՞րը կլիներ Ձեր առաջին հրամանը:

-Նախ եւ առաջ ասեմ, որ երբեք չեմ լինելու ոչ նախարար, ոչ պատգամավոր: Այդ իսկ պատճառով չեմ կարող ասել, թե կաշառակերության դեմ պայքարի նախարարություն պե՞տք է, թե ոչ: Եթե կառավարության տարբեր օղակներ, դատախազությունը, ներքին գործերի նախարարությունը առանց որեւէ հատուկ նախարարության, առանց արտակարգ հանձնաժողովի իրենց մասնագիտական պարտականությունները կատարեն, ամեն ինչ լավ կլինի:

-Թե՞րթն է Ձեզ ավելի հոգեհարազատ, թե՞ հեռուստատեսությունը: Համաձա՞յն եք, որ տպագիր մամուլը գնում է մահացման:

- Առայժմ չեմ կարծում, որ գնում է մահացման, բայց պատմական հեռանկարում կարծում եմ, ինտերնետի զարգացմանը զուգահեռ, տպագիր մամուլը, որպես թղթի վրա տպված մամուլ, իսկապես կամաց-կամաց կգնա ոչնչացման: Բայց իմ սերնդին կբավարարի այդ շրջանը, որ մենք շարունակենք թերթ տպել: Ինձ ավելի հոգեհարազատը հեռուստատեսությունն է, որովհետեւ եթերը տալիս է բոլորովին այլ զգացմունքներ, այլ էյֆորիա: Դա թմրամիջոցի նման մի բան է, որից մարդը դժվարությամբ է բաժանվում:

-Մարտի 22-ին Արցախում կատարվածը համարու՞մ եք Հայաստանում հոկտեմբերյան իրադարձությունների արձագանքը:

-Իհարկե, համարում եմ:

-Ինչպե՞ս եք գնահատում լրագրողների մասնագիտական կազմակերպությունների գործունեությունը:

-Ես չեմ մտնում ոչ մի լրագրողական մասնագիտական հասարակական կազմակերպության մեջ: Սակայն, եթե հայ մարդիկ կարողանում են իրենց կազմակերպել, արտասահմանից ստանալ ինչ-որ շնորհներ եւ դրանցով ապրել, ապա ես դա միայն ողջունում եմ:

-Ձեր կարծիքով, կա՞ արդյոք պետական լրատվամիջոցների անհրաժեշտություն:

-Ոչ, պետական լրատվամիջոցների անհրաժեշտություն չկա: Բազմիցս ասել եմ, որ մասնավորապես անհրաժեշտություն չկա պետական հեռուստատեսության: Դա իսկապես բոլշեւիկյան շրջանի մնացորդ է: Այն խնդիրները, որոնք վերջերս ծագեցին դրա վառ ապացույցն էին, երբ ինչ-որ պետական օրգան մյուս պետական օրգանից դժգոհ էր: Պետք չէ: Ընթերցողը, հեռուստադիտողը, գովազդատուն ինքը թող որոշի՝

ինչը նայել, ինչը՝ ոչ, որ ասուլիսը ինչքան պետք է տեւի, ինչքան պետք է ցուցադրվի եւ այլն: Դրանով մի հեռուստատեսությունը կբարգավաճի, մյուսը՝ կձախողվի:

-Շատ է խոսվում «Տիգրան Մեծ» հրատարակչության եւ «Հայմամուլի» մենաշնորհային բնույթի բացասական հետեւանքների մասին: Համաձա՞յն եք, որ դրանք բացասական դեր են խաղում եւ եթե այո, ինչ լուծումներ եք առաջարկում:

-«Հայմամուլն» իսկապես մենաշնորհ ունի, որովհետեւ մամուլի տարածման նոր կրպակներ դնելը, նոր ճանապարհներ սարքելը շատ դժվար է: Այսուհանդերձ, կարծում եմ, որ դա շատ լավ բիզնես կլինի եւ գործարարները պետք է փորձեն:

«Տիգրան Մեծ» հրատարակչությունը մենաշնորհային չէ, կան տարբեր թերթեր, որոնք տպվում են տարբեր հրատարակչություններում: Իմիջիայլոց, պետք է ասեմ, որ թե «Տիգրան Մեծ» հրատարակչության, եւ թե «Հայամամուլի» հետ «Առավոտն» ունի հոյակապ հարաբերություններ:

-Ըստ Ձեզ, Հայաստանում կայացա՞ծ է մամուլի ծառայությունների ինստիտուտը: Դրանք այսօր խանգարո՞ւմ, թե օգնում են լրագրողների աշխատանքին:

- Արդեն նշեցի, որ դրանք խանգարում են լրագրողի աշխատանքին եւ չնչին բացառություններով խնամիների, ծանոթների, բարեկամների եւ այլ մտերիմների տեղավորման տեղ են:

-Ի՞նչ քայլեր է գործադրում Ձեր թերթը Հայաստանում ճիշտ ժողովրդավարության զարգացմանը նպաստելու համար:

-Թերեւս, իմ ամբողջ դասախոսությունը այդ հարցի պատասխանն էր:

-Գրահրատարակչության եւ տեղեկատվության վարչության գործունեությունը ներկայումս որո՞ւ է: Ըստ Ձեզ, այն արդյունավե՞տ է գործում:

-Ճիշտն ասած, դժվարանում եմ ասել, ինչի համար է այդ վարչությունը ստեղծվել: Երեւի այն ժամանակ պետք էր պաշտոն տալ շատ լավ բանաստեղծ եւ այն ժամանակվա իշխանության մտերիմ Հրաչյա Թամրազյանին, ու դրա համար հորինվեց տեղեկատվության եւ գրահրատարակչության նախարարությունը: Չեմ կարծում, որ վարչությունը այս պայմաններում ինչ-որ շատ կարեւոր դեր պետք է խաղա եւ ժամանակի ընթացքում նույնպես կլուծարվի:

-Ի՞նչը կարող է նպաստել լրագրողների շրջանում գործող ներքին գրաքննության վերացմանը:

-Ինձ թվում է ընդհանուր հասարակության, տնտեսության, անկախ գործատուների, գործարարների ինստիտուտների զարգացումը, լրագրության համար անկախ աղբյուրների գոյացումը կխթանի նաեւ լրագրողների ազատությունը: Մեկը չի կարող նստել, ասենք, համակենտրոնացման ճամբարում եւ ներքուստ ազատ լինել: Նման բաները հակասում են միմյանց:

-Ի՞նչպիսի կոնկրետ առաջարկներ ունեք ինֆանտիլիզմի վերացման համար:

-Կարծում եմ, որ քարոզչությամբ, ինչ-որ արժեքներ մատուցելով, զարգացած երկրների փորձը ցույց տալով մենք պետք է մերը կատարենք: Բայց, ասենք, Ազգային ժողովը պետք է կատարի իր առաքելությունը: Ենթադրենք արժեթղթերի շուկայի մասին օրենքը ես ողջունում եմ, իսկ եթե ԱԺ-ն ընդունի թոշակառուների թոշակը տասն անգամ բարձրացնելու օրենք, որը միեւնույն է, թոշակառուներին այդպես էլ չեն տա, ես չեմ ողջունի, որովհետեւ դա մաքուր պոպուլիզմ կլինի: Ինֆանտիլիզմը պետք է վերացվի համակարգային փոփոխություններով, որոնք պետք է կատարեն իշխանության բոլոր թեւերը:

-Կարո՞ղ է արդյոք Ստեփանակերտում նախագահի նկատմամբ կատարված մահափորձը խորացնել քաղաքական ճգնաժամը Հայաստանում:

- Անշուշտ, ճգնաժամը կխորանա: Քանի դեռ կա այն համակարգը, որը հիմնված է ռազմական, այսինքն՝ գեներալների իշխանության վրա (այդ համակարգը ստեղծվել է 1995-96 թ.), կլինեն նման ցնցումներ: Դրանցից խուսափելու ձեւը միմիայն հասարակության աջակցությունը վայելող իշխանություն ստեղծելն է Հայաստանում եւ Արցախում:

-Ինչպե՞ս կմեկնաբանեք այն փաստը, որ մամուլի միջոցները կաղապարվում են միայն քաղաքական շրջանակներին առնչվող անձանց մտածողությամբ, իսկ հասարակական լայն շրջանակները չեն ընկալում, յուրացնում մատուցվող ինֆորմացիան: Չի՞ ստացվում, որ թերթերն աշխատում են նեղ շրջանակի համար:

-Միանգամայն համաձայն եմ: Աշխատում ենք դրանից ազատվել, բայց շատ դժվար է: Իսկապես պետք են նոր տիպի լրագրողներ, երեւի՝ նոր տիպի թերթեր, որոնք կկարողանան այդ կաղապարներից դուրս գալ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ

«Դասախոսությունների շարք» ծրագիր

Բանախոս.
ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ

Տիգրան Թորոսյան

Թեմա. «ՀՀ ներքաղաքական իրավիճակի վերլուծություն»

Ապրիլի 20-ին, ժամը 18:30-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում
Դասախոսությունը կընթանա հայերենով՝ անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երեւան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր

ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ

Տիգրան Թորոսյանը

ներկայացնում է

«ՀՀ ներքաղաքական իրավիճակի վերլուծություն»

Հինգշաբթի, ապրիլի 20-ին,
ժամը 18:30-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի

փոքր դահլիճում

Դասախոսությունը կընթանա հայերենով,

անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին

Անգլերեն յոթ փուլերով, 2000թ.

Յուրաքանչյուր փուլի

տևողությունը՝ (I , III, V ,VII փուլեր) *մայիսի 29-ից մինչև հուլիսի 28-ը, երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ, ժամը՝ 17:00--20:00*

(II, IV, VI փուլեր) *մայիսի 30-ից մինչև հուլիսի 29-ը, երեքշաբթի, հինգշաբթի օրերին ժամը՝ 17:00--20:00 և շաբաթ օրը ժամը՝ 14:00-17:00*

վարձը՝ ***130 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)***

Անգլերենն աշխատանքում (երկու փուլերով)

Յուրաքանչյուր փուլի

տևողությունը՝ (I փուլ) *մայիսի 30-ից մինչև հուլիսի 29-ը; երեքշաբթի օրերին, ժամը 18:30-ից 20:30, շաբաթ օրերին ժամը՝ 15:00--18:00*

(II փուլ) *մայիսի 31-ից մինչև հուլիսի 29-ը; չորեքշաբթի օրերին, ժամը 18:30-ից 20:30, շաբաթ օրերին ժամը՝ 15:00--18:00*

վարձը՝ ***75 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)***

Գործարար հաղորդակցություն անգլերենով

տևողությունը՝ *մայիսի 30-ից մինչև հուլիսի 1-ը երեքշաբթի, հինգշաբթի օրերին, ժամը՝ 18:30--20:30, շաբաթ օրերին ժամը՝ 10:00--12:00*

վարձը՝ ***50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)***

TOEFL-ի նախապատրաստական դասընթաց

տևողությունը՝ *ապրիլի 26-ից մայիսի 26-ը երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ, ժամը՝ 17:00--20:00*

վարձը՝ ***75 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)***

- *Դասընթացների գրանցումը և վճարումը տեղի կունենան Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) 19ա սենյակում, ժամը 09:00-ից մինչև 17:45*
- *Յուրաքանչյուր դասընթացում կընդգրկվեն նվազագույնը 10, առավելագույնը 15 դիմորդներ*
- *Բացի անգլերենի առաջին փուլից, անգլերենի մյուս դասընթացներում ընդգրկվելու համար դիմորդները պետք է հանձնեն անգլերեն լեզվի քննություն, որը տեղի է ունենում յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը, **(առաջիկան՝ մայիսի 1-ին)**, ժամը 13:00 ՀԱՀ-ի փոքր դահլիճում: Քննության վճարն է 500 դրամ*
- *Փուլերը հաջորդաբար շարունակելու դեպքում գործում են զեղչեր*

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք

ՀԱՀ-ի 19ա սենյակ ժամը 09:00-ից մինչև 17:45 կամ զանգահարեք 27-16-58